

ՓԻԼԻՍՈՓԱՅ ՍՈՑԻՕԼՈԳ

«Փիլիսոփայական մտքի ընդհանուր էվոլյուցիայի ուրուագիծը» մեր յօդուածում ¹⁾ մենք ծանօթացրինք իդեալիստական և մատերեալիստական ուղղութիւնների հետ և կանգ առանք վերջին շօլայի ամենախոշոր ներկայացուցիչ Սպենսերի վրայ:

Սպենսեր ոտքերի վրայ դրեց իրականութիւնը, որ իդեալիզմը դրել էր գլխիվայր: Տասնիններորդ դարի մեծ փիլիսոփան եղաւ իր դարի հաւատարիմ թարգմանը: Փիլիսոփայութիւնը ստացաւ նրա օրով իր իսկական նշանակութիւնը և որոշումը: Կապել, ընդհանրացնել իրողութիւնները, ձուլել, ամբողջացնել բոլոր գիտութիւնների տուած արդիւնքները, ընութեան այլազան երևոյթներից ստեղծագործել մի ներդաշնակ սիստեմ, համայնապարփակ մի ամբողջութիւն—ահա ճշմարիտ փիլիսոփայի դերը:

Եւ այդ նպատակին հետամտեց Սպենսեր վաթսուն տարուայ իր փիլիսոփայական գործունէութեան ընթացքում, (նա քսանուհինգ տարեկան հասակից էր սկսել իր վերացական ուսումնասիրութիւնները), և չնայած իր հսկայ ուժերին ու անօրինակ աշխատասիրութեան՝ հազիւ կարողացաւ մահուան նախընթաց օրը ²⁾ աւարտել իր մեծ, հոյակապ գործը—համադրական փիլիսոփայութեան սիստեմը:

Այդտեղ, ընթերցող, դուք ականատես էք, թէ ի՞նչպէս է գոյացել տիեզերական վիթխարի շէնքը, ի՞նչ ուժերի և ի՞նչ օրէնքների գործակցութեամբ նախնական պարզ, ամպաձև զանգուածից աստիճանաբար առաջացել է արեգնային համակարգութիւնը, երկրագունդը, շնչաւոր աշխարհը:

Սպենսերի միտքը էապէս ուշախոտ է, իրապաշտական: Նա ոչ Կանտի պէս ուզեց կառուցանել ամբողջ տիեզերքը իր բանականութեան տարերքներով, ոչ էլ Հեկելի պէս միշտ ու-

¹⁾ Տես «Մուրճ» 1904 թ. № 9:

²⁾ Նա մեռաւ անցեալ դեկտեմբերին:

զեց սաւառնել զուտ արտարակցիայի եթերային բարձունքների վրայ... Նա երբէք չարհամարեց կենդանի փաստերը, ինչ աշխարհում էլ որ լինեն նրանք,—կենսաբանութեան, հասարակագիտութեան, բարոյագիտութեան, հոգեբանութեան մէջ:

Սպենսերը եղաւ Էվոլյուցիայի անզուգական թէօրիտիկոսը, նրա փիլիսոփան: Աստիճանական զարգացման օրէնքը, որ Լամարկի ու այլոց ջանքերով շեշտուած էր արդէն կենսաբանութեան մէջ, նա ընդհանրացրեց, կիրարկեց ամբողջ տիեզերքի վրայ: Այդպիսի մի փորձ արել էր Հեգելը, բայց, ինչպէս տեսանք նախորդ տեսութեան մէջ, Հեգելը այդ արել էր լոկ արտարակտ մտքի սահմաններում, հաշուի չառնելով կենդանի իրականութիւնը, նիւթի, շարժողութեան իրական գործօնները:

Էվոլյուցիայի սկզբունքի վրայ Սպենսեր հիմնեց մի նոր կոսմոլոգիա, տիեզերագիտութիւն: Նոր ու ընական մի «արարչագործութիւն» ուր յաւիտենապէս գործակցում են նիւթը և շարժումը, ուր տեղ չունեն՝ ոչ իդէալիստական սպեկուլեացիաները, ոչ թէօլոգիական, աստուածաբանական բանդազուշանքները:

Նիւթ և շարժում... Նրանք բղխում են մի ուրիշ էլեմենտից, մի աւելի բարձր իրականութիւնից, որը հանդիսանում է բոլոր սկզբունքների Սկզբունքը:

Ուժն է այդ գերագոյն իրականութիւնը: Նա մնայուն է, անկորնչելի. նրա քանակութիւնը անփոփոխելի է, յաւիտենական: Նա չէ նմանում այն կոնկրետ ուժին—մշտափոփոխ և անցողական—որ մենք զգում ենք մեր մկանների մէջ. նա բոլոր ոյժերի և գոյութիւնների, բոլոր նիւթերի և շարժումների վերջին արտարակցիան է, վերջին ընդհանրացնող եզրակացութիւնը: Ուրիշ խօսքով՝ նա նոյն ամբողիւ, բացարձակ ուժն է, որի մասին մենք աղօտ գաղափար ունենք և որը միանգամայն անհրաժեշտ լրացուցիչ է (Corrélat) բոլոր երեւելի, շոյափելի ոյժերի:

Ոյժը մնայուն է տիեզերքի մէջ.—Սպենսեր դնում է այդ՝ իբրև բանականութեան անպայման պահանջ, իբրև պոստուլատ: Այդ պոստուլատը հիմքն է բոլոր փորձերի, ուսումնասիրութիւնների և իբրև այդպիսին՝ նա դուրս է փորձի, քննութեան սահմաններից, նա փիլիսոփայական մտածողութեան չղկէտն է դառնում: Նա ինքը Բացարձակն է, Աբսոլյուն:

Սա «մետաֆիզիկա» է, անշուշտ: Բայց մետաֆիզիկա է և մատերիալիզմը, որը ընունում է «տիեզերական սուբստանցի» օրէնքը, ամեն բան ընդգրկող այդ առեղծուածք:

«Բացարձակը գոյութիւն չունի, ամեն բան յարաբերա-

կան է, այսպէս էր յայտարարում Սպենսերից առաջ՝ անգլիացի փիլիսոփա Համիլտոն: Բացարձակի գաղափարը բացասական մի տարր է—աւելացնում էր նա—մենք չենք կարող կազմել նրա մասին որոշ մտապատկեր, առանց մեզ հակասելու:

«Բացարձակ (արստիւ) ոչինչ չկայ, ամեն բան յարաբերական է մեր աշխարհի մէջ»,—այսպէս է վկայում և սովորական մարդկային դատողութիւնը:

Բայց դա սխալ է: Յարաբերականութեան գաղափարը ինքնին արդէն մտածել է ապլիս իր հակոտնեայի՝ բացարձակի գաղափարի մասին: Նրանք երկուսն էլ գոյութիւն ունին, որպէս փոխադարձ լրացուցիչներ: Մէկը առանց միւսի անըմբռնելի է: Կարծիք էք երևակայել լոյսը առանց խաւարի, ձգողութիւնը առանց վանողութեան, բարութիւնը առանց չարութեան:

Դրանք յաւիտենական «հակոտնեաներն» են, անտիպոզները: Եւ երբ մենք առօրեայ կեանքում այնքան յաճախ խօսում ենք բացարձակ հաւատի, բացարձակ արդարութեան, մաքրութեան մասին, մենք շատ լաւ զգում ենք, թէ ինչ ենք ուզում ասել դրանով: Ամեն բան, անշուշտ, յարաբերական է, բայց «արստիւ»-ի, բացարձակի գաղափարը ևս անջնջելի կերպով մնում է մեր գիտակցութեան խորքերում, որպէս մի իղէալ, որին միշտ ձգտում է «յարաբերականը», առանց երբէք հասնելու: Նա բացասական ու հակասական չէ, ինչպէս պընդում էր Համիլտոն, այլ նա մի դրական գաղափար է, թէև նրա մասին չունենք որոշ ու յստակ մտապատկեր:

Այդպէս է մտածում Սպենսեր: Բացարձակը, ուրեմն, ներկայ դէպքում, հանդիսանում է Ոյժի մնայունութեան կամ յարատւութեան օրէնքը (La persistance de la Force):

Սպենսերի համար նա վերջին, ընդգրկող ճշմարտութիւնն է, որից դէդուկտիվ կերպով բխում են բոլոր միւս ճշմարտութիւնները:

Նրանցից հետևում է նախ, որ 1) Այլևայլ ուժերի փոխադարձ յարաբերութիւնը մշտնջենական է, որ ուրիշ խօսքով, բնութեան երևոյթների մէջ կայ անհրաժեշտ, օրինական շրջափակցութիւն, որ նման պատճառները ամենուրեք ծնում են նման հետևանքներ:

2) Մի ոյժ կարող է փոխարկուել մի այլ ոյժի, առանց իր քանակութիւնից կորցնելու: Տաքութիւնը, որոշ քանակութիւն ծախսելով, արտադրում է մի ոյժ, որ շարժման մէջ է դնում լոկոմոտիվը, և այդ դէպքում ծախսուած ոյժը հաւասարուում է արտադրուած ոյժին:

Միևնոյն ոյժը երկան է գալիս այդպիսով տարբեր ձևերի տակ.—մի տեղ նա դառնում է լոյս, մի այլ տեղ՝ տաքութիւն, մի ուրիշ տեղ՝ ելիկտրականութիւն կայլն: Եւ այդ յաւիտեանական մտածորֆոզի ընթացքում ոյժի քանակութիւնը ի՛նչ պակասում է, ի՛նչ աւելանում: Այդ նշանաւոր իրողութիւնը, որ Սպենսեր առաջ է բերում a priori,—ապացուցուած է հռչակաւոր ֆիզիկոսների, Ռոբերտ Մայէրի, Ժուլի, Հեմհոլցի և ուրիշների կողմից:

3) Շարժումը առաջ է գնում այն ուղղութեամբ, ուր դիմադրութիւնը ամենաթոյլն է: Այդպէս օրինակ, գետը հոսում է, ուր ամենից քիչ խոչընդոտներ կան, երկրաշարժը աւերածներ է անում սովորաբար միևնոյն տեղերում, հրաբխային գործունէութիւնը արտայայտւում է որոշ գծերով և ժայթքումները կատարւում են միևնոյն ճեղքուածքներով կայլն կայլն: Հասարակական շարժումները ևս հնազանդւում են միևնոյն օրէնքին:

4) Շարժումը ըրիթմային է (rythmique, չափաբերական): Ըրիթմը առաջ է գալիս ամեն տեղ, ուր շարժումը հանդիպում է դիմադրութեան, ուր կայ ընդհարում երկու անհասար ոյժերի միջև:

Ամեն ինչ բնութեան ու հասարակութեան մէջ ընթանում է ըրիթմով, ծփանքներով.—ալիքները, որ մերթ իջնում են, մերթ բարձրանում՝ աստղերը, որ մերթ մարում են, մերթ փալիւլում երկնակամարի վրայ, մոլորակները, որ կազմալուծւում են և կազմակերպւում մշտնջենապէս. շնչաւոր աշխարհը, որ նորոգւում է պարբերաբար, կենդանիների այլևայլ տեսակները, որ անյիշատակ ժամանակներից իվեր ծնունդ են առել երկրագնդի վրայ, աճել, զարգացել են և ապա անհետացել, վերջապէս, մարդկային աշխատանքը, հասարակութիւնների ու անհատների հոգեկան կեանքը իր պարբերական ելևէջներով ուրախութիւններով ու կսկիծներով, ոգևորութիւններով ու վհատութիւններով—ամեն տեղ երևան է գալիս անխուսափելի ճակատադրական ըրիթմը, որ յատկանիշն է ամեն շարժողութեան և անհրաժեշտ լրացուցիչը Ոյժի մնայունութեան մեծ օրէնքի:

Կայ մի հիմնական, տիեզերական ըրիթմ, որին վերածւում են վերջնական քննութեան մէջ բոլոր միւսները. նա արտայայտւում է երկու բառերով՝ զարգացում և քայքայում*) Էվոլուցիա և դիսսոլուցիա:

*) Evolution & dissolution—զարգացում և քայքայում կամ կազմակերպում և կազմալուծում: Հայ լեզուի մէջ չենք գտնում բառեր, որոնք այդ երկու գաղափարների ճշգրիտ թարգմանը լինէին:

Բացարձակ անշարժութիւն երբէք չկայ—նիւթը և շարժումը մշտնջենապէս բաժանուում, բաշխուում են տիեզերքի մէջ: Ամեն ինչ անկայուն է, երոյր առարկաները աճում են կամ փչանում, նիւթ են ամբարում կամ նիւթ են սպասում:

Էվոլյուցիայի պրոցէսի ընթացքում նիւթը խտանում է և ամբողջանում (intégration) կամ ուրիշ խօսքով՝ նրա մասնիկների փոխադարձ կապը ամրապնդուում է, մինչդեռ շարժումը ցրուում է, վատնուում:

Դիսսոլյուցիայի պրոցէսի ընթացքում ընդհակառակը՝ նիւթը նօսրանում է, նրա մասնիկների կապը թուլանում (désintégration), մինչդեռ շարժումը ամփոփուում է և կենտրոնանում:

Էվոլյուցիայի պրոցէս է կատարուում, երբ երկրադունդը իր սկզբնական հրահեղուկ վիճակից աստիճանաբար զարգանում է դէպի ներկայ դրութիւնը.—նրա կեղևը միշտ աւելի և աւելի ամրապնդուում է (նիւթի խտացում, (intégration), հետզհետէ պաղելով, այսինքն, կորցնելով ներքին պոտենցիալ շարժողութիւնը:

Էլօլյուցիայի պրոցէսի ընթացքում բացի վերը յիշած երևոյթներից՝ նկատելի են և հետեւեալները.

Նիւթը միապաղաղ, հոմոթէն վիճակից (homogénéité) սովորաբար անցնում է դէպի այլատարր հետերոթէն դրութիւն (hétérogénéité): Այն ժամանակ, երբ զանգուածները ամփոփուում են, ձուլւում ի մի ամբողջութիւն, նրանց մէջ կատարուում է զանազանատրումը՝ դիֆֆէրենցիացիա (différentiation): Ներդաշնակ ամբողջութեան մէջ մասնիկները միշտ աւելի և աւելի զանազանատրուում են, իւրաքանչիւր մասնիկ ստանում է իր որոշ ձևը, իր որոշ տեղը: Այդ պատճառով առուում է նոյնպէս, որ էվոլյուցիայի ընթացքում առարկաները քասօսային, անորոշ դրութիւնից անցնում են դէպի յստակ ու որոշ դրութիւն:

Ամփոփելով՝ մենք ստանում ենք հետեւեալ ֆորմուլը.

Էվոլյուցիան՝ նիւթի խտացման (եւ շարժման վատնումի) գործողութիւնն է, որի ընթացքում նիւթը անկապ, անորոշ, պարզ, հոմոթէն դրութիւնից անցնում է աստիճանաբար դէպի յարակից, որոշ, հետերոթէն եւ ըարդ դրութիւնը:

Այդ ֆորմուլով է առաջ ընթանում տիեզերական համայն զարգացումն ու առաջադիմութիւնը: Այդ օրէնքին են հնազանդուում անօրգանական և օրգանատր աշխարհները, հասարակութիւններն ու անհատները իրանց անդադրում ձեւփոխութեան մէջ: Վերցրէք նախնական պրոտոպլազմը, վերցրէք անասնական կամ մարդկային սաղմը: Ո՛րքան պարզ է նա իր սկզբնա-

տրութեան մէջ.—գրեթէ բոլորովին միատարր, հոմոթէն: Բայց ահա աստիճանական, իրարու յաջորդող ձևափոխումներով նա կամաց-կամաց դառնում է օրգանների ու հիւսուածքների մի բարդ զանգուած, մի հետեւորոժէն ամբողջութիւն, ուր սահմանուած է այնքան խելացի աշխատանքի բաժանում, ուր ամեն մի բջիջ ունի իր որոշ տեղն ու պաշտօնը—մի ամբողջութիւն, որ մենք անուանում ենք անասուն կամ ասուն:

Այդպէս է ամեն մի օրգանիզմի պատմութիւնը տիեզերքում: Ինքը տիեզերքը, Կանտ-Լապլասեան հոշակաւոր թէօրիայի համեմատ՝ ներկայացնում էր սկզբում պարզ, ամպածև, հոմոթէն մի զանգուած, ուր տակաւին չկար այլազանութեան հետք, ուր միայն գործում էին երկու ճակատագրական, հակամարտ ուժերը՝ ձգողութիւնն ու վանողութիւնը՝ (Attraction, Répulsion). հարիւրաւոր և հազարաւոր դարերի ընթացքում այդ զանգուածը աստիճանաբար զանազանաւորուեց, ենթարկուեց դիֆֆէրենցիացիայի և ծնունդ տուեց իր արգանդից անհամար համաստեղութիւններին՝ երկրագնդին ու արեգակներին, աստղերին ու մուրալներին, որոնցից իւրաքանչիւրը մայր զանգուածից բաժանուելու միջոցին նոյնպէս գրեթէ հոմոթէն, անորոշ մի զանգուած էր և միայն ժամանակի բովում, անընդհատ շարժողութեան, պտոյտների շնորհիւ, ընդունեց այն որոշ, խտացած կերպարանքը, որ դիտելի է ներկայում:

Բուսական և կենդանի աշխարհները՝ զարվինական թէօրիայի համեմատ՝ նոյնպէս զանազանաւորուել են աստիճանաբար, արտագրել են հետզհետէ բոյսերի ու կենդանիների անթիւ ու այլազան տեսակներ: Դարձեալ էվոլուցիա՝ հոմոթէնից դէպի հետեւորոժէնը:

Քաղաքակրթութիւնը իր առաջադիմութեան պրոցեսում, սկսած բարբարոսութեան ամենահին ժամանակներից՝ դարձել է միշտ աւելի և աւելի այլատարր, հետեւորոժէն, շնորհիւ այն հանգամանքի՝ որ աշխատանքը հետզհետէ բաժանուել է ցեղերի, ազգերի, դասակարգերի, անհատների մէջ:

Եւ այսպէս բոլոր աշխարհներում—գիտութեան, փիլիսոփայութեան, կրօնի, լեզուի, գրականութեան, արուեստի, բանաստեղծութեան մէջ ևայլն—ամեն տեղ էվոլուցիան միևնոյն եղանակով է կատարում իր ըիթմը, ամեն բան՝ շնչաւոր ու անշունչ, տիեզերքի մէջ զարգանում, ձևափոխուում, առաջադիմում է, անցնելով միշտ պարզ դրութիւնից դէպի բարդը, հոմոթէնից դէպի հետեւորոժէնը, անորոշից դէպի որոշը:

Չարգացման անիւր առաջ է մղում միշտ դէպի աւելի և աւելի բարձր ձևեր, դէպի այլազանութիւն ու կատարելութիւն... Եւ

սակայն—աւանդ—ուժերի յարատե հաւասարակշռութիւն երբէք չենք դանում. արտաքին ազդակները անդուլ շարունակում են իրանց համայնաւեր ազդեցութիւնները և վերջիվերջոյ կազմալուծում են ամենակատարեալ, ամենահոյակապ օրգանիզմն անգամ—լինի դա մի աստղ կամ մի արեգակ, մի կենդանի մարմին, մի քաղաքական, հասարակական կազմակերպութիւն...

Այդ էլ միւս օրէնքն է, հակամարտ օրէնքը՝ նոյնպէս երկաթէ, տիեզերական—դիսսոլիւցիայի, քայքայման օրէնքը...

Միք. Յովհաննիսեան

(Գը շարունակուի)

ԲԻՐՄԱՆԻՐՏԻ ՀՆՏԵՐԻ ԱՆՏԵՆԼԻՑ ԵՒ ՆԵՐՎԱՆՏԻՑ ¹⁾

Բրմահայերի անցեալից միայն հետեւեալ տեղեկութիւններն եմ կարողացել ձեռք բերել. սրանց մի մասը (J. Crawford) Զ. Կրաֆլըրդ ²⁾ անունով մի անգլիացի պատգամաւորի օրագրութիւնից եմ քաղել, իսկ միւս մասը ներկայումս ծերերից եմ լսել:

Յիշեալ պատգամաւորի օրագրութեան մէջ, ի միջի այլոց յիշուած են հետեւեալները: Պ. Մարգիս Մանուկ անունով մի հայ հաւատարիմ և մեծ ծառայութիւն էր արել իրանց՝ պատգամաւորութեան առթիւ: Գրում է, որ սա չորս հարիւր հազար ռուբլիից աւելի պահանջ ունէր Բրմայ կառավարութիւնից. մերձ 22, 000 ռուբլիի արժողութեամբ ընծաներ և նուէրներ է բաժանել թագաւորին և նրա պաշտօնեաներին. բայց էլի չի վստահանում եղել իր պահանջի համար հարցնել: Յիշում է նաև թէ մի հայի տուն էին մտել կարմիր յակլինթ (եաղութ) տեսնելու. պատմում է թէ մանր տեսակներից քանի հատ գնեցին. իսկ երբ մեծ տեսակների համար էին հարցրել, նոյն հալը հնդիկ

¹⁾ 1904 թ. «Մուրճ»-ում № 9-տպուած էր «Հայերի Բրմաստան գաղթիւր»:

²⁾ J. Crawford անունով յիշեալ պատգամաւորը 1826 թուին Անլք. կառավարութիւնից ուղարկուել է Բրմայ թագաւորի հետ դաշինք կապելու Ավա մայրաքաղաքում (Բրմաստանի): Յիշեալ պատգամաւորը իր պաշտօնը կատարում է և օրագրութեան ձեռք պատմում է Բրմաստանում տեսածները: Մ. Հ. ք. 6.